Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի <<Ողջաբերդի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի դասվարի /14 դասաժամ,4-րդ դասարան/, ինֆորմատիկայի / 6 դասաժամ/ ,տեխնոլոգիայի /4 դասաժամ տղաների խումբ/, ֆիզկուլտուրայի /20 դասաժամ/,ռուսաց լեզվի / 27 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

–դիմում /Ձև 1/, մեկ լուսանկար3x4 չափի,

-բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ/դիպլոմ/,

-անձը հաստող փաստաթուղթ,

-<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի1-ին մասին համապատասխան՝աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը/առկայության դեպքում/ ,

-ինքնակենսագրություն /Ձև 5/,

- այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետու-թյունում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինգրքույկ,

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր/առկայության դեպքում,

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում, եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են հոկտեմբերի 13-ից մինչև հոկտեմբերի 26-ը **ներառյալ**, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ , կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 28 -ին՝ ժամը **15:00 -ին**, Կոտայքի մարզի Ողջաբերդի միջնակարգ դպրոցում. հասցեն՝ Կոտայքի մարզ գ. Ողջաբերդ, 5-րդ փ., 4-րդ շենք :

Տեղեկությունների համար զանգահարել՝ (091) – 06-08-46 կամ /094/11-38-95 հեռախոսահամարներով: